

2013թ. խոշոր հարկ վճարողների մոնիտորինգի ամփոփ ցուցանիշների  
վերլուծություն

Սույն վերլուծությունը իրականացվում է այն 489 հարկ վճարողների ամփոփ ցուցանիշների հիման վրա, որոնք ՀՀ ԿԱ ՊԵԿ նախագահի հրամանով ընդգրկված են խոշոր հարկ վճարողների հարկային տեսչության կողմից 2013թ.-ի ընթացքում սպասարկվող հարկ վճարողների ցանկում:

Խոշոր հարկ վճարողների մոնիտորինգի ամփոփ ցուցանիշների համեմատական վերլուծությունը իրականացվում է նույն 489 հարկ վճարողների 2012 և 2013 թվականների փաստացի տվյալների հիման վրա:

2013թ. առաջին եռամսյակի ամփոփ ցուցանիշների վերլուծության հիման վրա կարելի է փաստել, որ

1. Իրացումից հասույթը կազմել է 738.7 մլրդ դրամ կամ նախորդ տարվա նույն եռամսյակի համեմատությամբ աճել է 11.9 %-ով:
2. Ներմուծման ծավալները նախորդ տարվա նույն ժամանակաշրջանի համեմատությամբ աճել են 15.8 %-ով և կազմել 272.2 մլրդ դրամ:
3. Արտահանման ծավալները կազմել են 109.7 մլրդ դրամ, ինչը նախորդ տարվա նույն եռամսյակի համեմատ ավել է 26.4 %-ով:
4. Վճարված մաքսային վճարների ցուցանիշի առումով 2013թ.-ի առաջին եռամսյակում խոշոր հարկ վճարողների կողմից վճարվել է շուրջ 38.4 մլրդ. դրամ:
5. Պետական բյուջե վճարված հարկերի և այլ պարտադիր վճարների ցուցանիշի առումով 2013թ.-ի առաջին եռամսյակում խոշոր հարկ վճարողների կողմից վճարվել է շուրջ 73.8 մլրդ. դրամ: Ընդ որում, նշված կազմակերպությունների կողմից 2013թ.-ի առաջին եռամսյակում վճարվել է հանրապետությունում հավաքագրված հարկային եկամուտների 51.8 %-ը:
6. Հարկային մարմնի կողմից կատարվել են 100 հարկային ստուգումներ, այդ թվում բյուջեի հետ փոխհարաբերությունների և հարկային մարմնի կողմից վերահսկվող օրենսդրության առանձին պահանջների կատարման ճշտության 27 ստուգումներ, որոնց արդյունքում առաջադրվել է բյուջե լրացուցիչ վճարման ենթակա գումարներ 1.1 մլրդ. դրամի չափով:
7. 01.04.2013թ.-ի դրությամբ խոշոր հարկ վճարողներն ունեցել են 110.8 մլրդ դրամ գերավճար, այդ թվում՝ ավելացված արժեքի հարկի գծով՝ 66.1 մլրդ դրամ, իսկ հարկային պարտավորություն՝ 35.1 մլրդ դրամ: Նշված

Ժամանակահատվածում պետական բյուջեից հարկ վճարողների գերավճարների գումարներից ավելացված արժեքի հարկի վերադարձի ձևակերպում է կատարվել 4.4 մլրդ դրամի չափով կամ 6.2 %-ով պակաս նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ, իսկ գերավճարների գումարներից այլ հարկատեսակների գծով հաշվանցվել է 1.1 մլրդ դրամի չափով կամ 64.3 %-ով պակաս նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ:

8. Աշխատողների միջին ցուցակային թիվը դիտարկվող ժամանակահատվածում նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատությամբ ավելացել է 2871 մարդով կամ 2.0%-ով, իսկ աշխատանքի վարձատրությանն ուղղված միջոցների աճը կազմել է 15.8 %: